


«ԹՈՂ ՏՈՒԷՑ ՄԱՆԵՐ ՑՂՈՅՐ ՈՐ ԵՆՉԻ ԳՒՆՆ» : ՂՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ա Ր Ե .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ . ՅՈՒՆԻՍ 4 . 1876 .

ԹԻՒ 6



ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ԳԵՂԵՑԻԿ ԱՉԿԻԹԸ

**ԳՈՒՊՈՒ ԷՍ ԱՌԻԽՐԱ.**

Ամէն մարդ որ երուսողէմ կ'երթայ հետուէն կը տեսնէ գեղեցիկ գմբէթ մը, որ կը բարձրանայ այն բլուրներուն վրայէն որոյ վրայ քաղաքը շինուած է: Այս գմբէթին Գուպայէ էս Սուխրա կոչուած մզկիթին գմբէթն է: Եթէ դուք այն մզկիթին մարմարինեայ սանդուղներէն վեր ելլելով գաւիթը մտնէք, հոն պիտի տեսնէք որ մզկիթին կողմերը ծած-

կուած են դեղին, կոնանդ, կապոյտ և ծիրանեգոյն կլմինարներով: Այս կլմինարներն այնպէս շարուած են որ գեղեցիկ պատկերներ կը ձևացունեն: Գմբէթին բարձրաբլուր, և մզկիթին վեց կողմերուն գագաթին բարձրաբլուրը Արաբերէն արձանագրութիւններ կան: Մզկիթին պատկերը, զոր վերը կը տեսնէք, շատ գեղեցիկ է, բայց եթէ կարենայիք բուն մզկիթին և անոր գեղեցիկ երանգները

տեսնել, հաւաստի եմ որ պիտի խորհէիք թէ այն մզկիթն աշխարհիս ամենէն գեղեցիկ մզկիթն է: Մահմետականք սրբութեան կողմանէ Մեքքէի Քեապէյէն ետքը երկրորդ կը համարին այս մզկիթը: Էօմէր խալիֆան գրեթէ 1,200 տարի առաջ շինեց այս մզկիթն այն տեղ, ուր էր յառաջ Սողոմոնի տաճարը: Աւելի քան երկու հազար տարի առաջ Գաւիթ Յերուսաղի Ուռնայէն կալ մը

ծախու առած և հոն Տէրօջը սեղան մը շինած էր : Ետքը Սողոմոն այն տեղ շինեց իր փառաւոր տաճարը : Տաճարին հիման մեծ քարերէն սմանք դեռ կ'երևին մզկիթին բակին մէջ կամ տակը : Մզկիթն, որուն պատկերն այսօր կը տեսնէք, այն կողմն վրայ է, զոր Գաւիթ զնեց և ուր Հրեայք հարիւրաւոր տարի զԱստուած պաշտեցին :

Տղայոց Աւետարանի համար

**ԳԻՍԱԽՈՐ ԱՍՏՂԵՐ**

Մեր արեգակնային գրութեան մէջ կան նաև գիտաւոր կոչուած աստղեր : Այս աստղերն ընդ հանրագէտ իրենց ետևի կողմը պոչի պէս բան մը ունին, և անոր համար գիտաւոր կը կոչուին :


Գիտաւոր աստղերը միշտ չեն անուիր, այլ երբեմն միայն, և այս պատճառաւ շատերը սաստիկ կը վախնան երբ գիտաւոր աստղ երևի : Սակայն ինչպէս այն աստղերն որ ամէն գիշեր երկնիւրը կը փայլին, նոյնպէս և գիտաւորները չեն կրնար փաստ պատճառել :

Բոլոր գիտաւորներն ունին շրջանակներ որոյ մէջ իրենց շրջանը կը կատարեն, և միւս մտւորակաց պէս արեւուն բոլորակը կը դառնան : Բայց գիտաւորներն արեւէն այնչափ հեռու կ'երթան, որ շատ անգամ հարիւրաւոր տարիներ կ'անցնին մինչև որ անոնք մէկ շրջան կատարեն : Մինչև հիմա հինգ հարիւրէ տակ զգիտաւոր տեսնուած է, բայց շատ քիչերուն շրջանը հասկըցուած է, թէ քանի տարւոյ մէջ արեւուն բոլորակը կը դառնան :

Գիտաւորք արեւուն որչափ մտնեն, այնչափ աւելի արագ կը դառնան, և գիտցուած է գիտաւոր մը որ մէկ ժամու մէջ 880,000 մղն կամ 293,333 ժամ ճամբայ կը քայլէ : Գիտաւորներէն ամանք շատ լայն և երկար պոչեր կ'ունենան, մինչդեռ ուրիշ գիտաւորներ գրեթէ բնաւ չեն ունենար : Գիտաւորք երկրիս պէս կարծր մարմին չեն, այլ կազային կամ ծուխի պէս բան են, և անոնց մէջէն աստղերը կրնան տեսնուիլ :

Արդ այսպիսի շոգեղէն մարմնոյ մը երևնալը կրնայ մէկու մը աղէտ պատճառել : Եթէ գիտաւոր աստղերէն

մէկն երկրիս իսկ զարնուի, չկարծուիր թէ երկրիս փաստ ըլլայ, այլ գիտաւորն օգին մէջ կ'ընկզմի և կը կորսուի : Երբ գիտաւոր աստղ տեսնէք, ամենին մի վախնաք, այն աստղը չկրնար ձեզ փաստ հասցնել : Գիտաւորին նայելով խորհեցէք Աստուծոյ սքանչելի գործերուն վրայ :



Ք Ի Ի Ի - Ք Ի Ի Ի

Վերի պատկերին մէջ կը տեսնէք թռչուն մը որ թև չունի : Այս թռչունը նոր Զէլանտի Քիւի-քիւի կոչուած թռչունն է : Այն տեղի բնակիչներն այս թռչունին փետուրներէն իրենց հանգերէ կը շինեն : Այս թռչունն անտառներու մէջ կը գտնուի, և կ'ուռէ սրդ, մլուկ և ուրիշ ինչ որ կրնայ ժողովել գետնին վրայ և ծառոց արմատներուն մէջտեղ : Անոր անդունքն իր երկար կառուցին ծայրն են, այնպէս որ իրեն կեր գտնելու համար շան պէս կը հոտտէ, և ոչ միայն աչքով, այլ և կառուցովը կը գտնէ մլուկներ զորս շատ կը սիրէ :

Քիւի-քիւի իբր կանգուն մը բարձր է, և ինչպէս ըսինք, ամենին թև չունի, բայց շատ արագ կրնայ վազել, և կառուցովը ու ստրերովը մեանգամայն կը կուռի : Այս թռչունին փետուրները թուր և կակուղ են, և նոր Զէլանտի թագաւորք իրենց թագաւորական զգեստներն անոր փետուրներէն շինել կու տան : Քիւի-քիւի փետուրներէն շինուած վերարկու մը քանի մը լիւր կ'արժէ :

Վերջին տեսնելու քանի մը Քիւի-քիւի բունուելով Անգլիա բերուեցան : Այսպիսի թռչուն մը պատմութիւնը շատ անգամ լսուած, բայց

անհաւատալի երկցած էր : Սակայն հիմա Լանտոնի կենդանեաց պարտէզին մէջ քանի մը ողջ Քիւի-քիւիներ կան :

**ԲԱՐԻ ՈՐՐՇՈՒՄ ՄԸ**

Երեք տարի առաջ մեռաւ Ամերիկայի ծովային զօրութեան հրամանատար Տէյվիս Գարրալդը անուն ծովագետը, որուն անունը միշտ սիրով և պատուով պիտի յիշեն Ամերիկացիք : Կ'ուզեմ ձեզ ըսել, տղայք, թէ ինչ բան մեծ և բարի ըրաւ այն ծովագետը : Երբ տասը տարեկան էր, Գարրալդը իր հօրը նաևուն մէջ սպասաւորութիւն կ'ընէր : Այն ատեն նա ինքզինք մարդու տեղ կը դնէր, վասնզի կրնար ծեր նաւաստիի մը պէս հայհայել խմել, ծխել և թուղթ խաղալ : Օր մը ճաշէն ետքը հայրը խուցէն ամէն մարդ գուրս հանեց, դուռը դոցեց և իր փոքրիկ տղան քովը կանչելով ըսաւ անոր. «Տէյվիս, ի՞նչ ըլլալ կ'ուզես :» «Նաւաստի մը ըլլալ կ'ուզեմ,» պատասխանեց տղան : «Այո, խեղճ, թշուառ և գինով նաւաստի մը» ըսաւ հայրը, «Նաւաստի մը որոյ վրայ ոչ ոք հոգ պիտի ընէ. ամէն մարդէ սորնհար պիտի ըլլաս, և պիտի արհամարհուիս, և օտարական անձանօթ պիտի մեռնիս հեռաւոր երկիր մը :» «Ոչ,» ըսաւ տղան, «մեծ նաւու մը նաւագետ պիտի ըլլամ ինչպէս դուն ես :» «Ոչ, Տէյվիս, պիտի չկրնաս նաւագետ ըլլալ,» ըսաւ հայրը, «տղայ մը որ այնպիսի սկզբունք ունի, ինչպէս դուն ունիս, չկրնար նաւագետ ըլլալ : Եթէ մարդ ըլլալ կ'ուզես, բոլոր սովորութիւնները փոխելու ես :» Տէյվիսին հայրն այս խօսքերն ըսելէն ետքը խուցը թողուց և նաևուն ասխտակամածին վրայ ելաւ : Տղան այս խօսքերուն վրայ ամբիտահար եղաւ, և սկսաւ ինքնիրեն ըսել. «Խեղճ, թշուառ և գինով նաւաստի մը, որ ամենէն սորնհար կ'ըլլայ և կ'արհամարհուի : Այս պիտի ըլլայ իմ ապագայ վիճակս : Ընթացքս պիտի փոխեմ. ալ հայհայութիւն պիտի չընեմ, ալ կամ թուղթ պիտի չխաղամ :» Այն կէտէն սկսեալ Գարրալդը իր այս որոշումը հաստատ պահեց : Քիչ մը ետքը սորվեցաւ նաև թէ ինչ է ճշմարիտ Քրիստոնեայ ըլլալը, և Աստուծոյ շնորհքով եղաւ բարի մարդ և մեծ հրամանատար :

ԳՐԱՆԻ ՄԸ ԱՂԵԿ ԿՍՆՈՂՆԵՐ  
ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

Այն տղաք, որ կ'ուզեն իրենց ծնողքը երջանիկ ընել, գիտնալու են որ հետևեալ կանոններուն ուշագրութիւն ընելով կրնան իրենց նպատակին մտնենալ:

1. Երբ դուռ մը գոց պիտի մնայ, զայն բաց թողելու չէք, և երբ դուռը գոցէք, ամուր գոցելու չէք որ աղմուկ ելլէ:

2. Չվայելք որ տան մէջ պուտք, ոտտոտէք, վեր վազէք և վերի յարկը կամ սենեկի մը մէջ դանուած մարդոց բարձր ձայնով աղաղակէք:

3. Որեւց հետ որ խօսիք, միշտ քաղցրութեամբ խօսելու էք:

4. Երբ ձեզի կ'ըսուի այս բանն ընել և այն բանը չընել, « Ի՞նչու պիտի ընեմ » կամ « Ի՞նչու պիտի չընեմ » ըսելու չէք:

5. Չեր յանցանքներն, և ոչ ձեր եղբայր կամ քերթ յանցանքներն ըսելու էք:

6. Երբ տուն կու գար զգոյշ ըլլալու էք որ տախտակամածը չաղտոտէք:

7. Տան մէջ բնաւ աղտոտ երեսով կամ ձեռքով տեսնուելու չէք:

8. Երբ ուրիշները կը խօսին, անոնց խօսքը մի ընդմիջէք. այն ատեն միայն խօսեցէք երբ յարմարութիւն կայ ձեզ խօսելու:

9. Աշխատելու էք որչափ կարելի է ուրիշներն երջանիկ ընել, և ոչ ձեր անձերը հաճեցնելու:

10. Ոչ միայն հիւրերուն ազէկ երևելու համար, այլ միշտ աշխատելու էք որ այս կանոնները զանց չընէք:

տեսայ որ մօտիկցուցիր» ըսաւ: Սամուէլ դարձեալ ուրացաւ, և ըսաւ. «Չմօտիկցուցի» Ուրիշ կողմ խաղցող տղաք ասանց վէճը որ լսեցին, բանը քննեցին. և ուրիշ աղոյմէ հասկցան որ Սամուէլ ընկոյզը տեղէն փոխեր էր. ուստի վճռեցին թէ «Սամուէլ ուրիշ» է:»

Սիրելի տղաք, ջանացէք որ յանցաւոր չըլլաք, և եթէ պակասութիւն մը ընէք, Ք. Խ. Բ. Ե. Բ. որ յանցանքնիդ չձանրացունէք: « Իր յանցանքները ծածկողը յաջողութիւն չգտնէր, իսկ զանոնք խոտտովանող ու մէկդի ձգողը ողորմութիւն կը գտնէ. (Առակ. 13):»



Ուրեմն անասունը կատու է: Ո՛չ, սակրները շատ խոշոր են, կատու մը չկրնար այնչափ խոշոր սակր ունենալ:

Ուրեմն ո՞ր կենդանիները սրածայր սկուայ և կատուի ճիրաններու պէս ճիրան կ'ունենան:

Առիւծներն, ինչպէս նաև վագրերը, ընձառիւծներն և այն տեսակէն եզրղ բոլոր կենդանիները կատուի ճիրաններու պէս ճիրաններ կ'ունենան:

Այս, այս սակրները կատուի ցեղէն եզրղ անասնոյ մը սակրներն ըլլալու են. բայց այն անասունը նոյն ցեղին խոշոր տեսակներէն ըլլալու է: Թերևս առիւծ կամ վագր էր: Բայց այդ սակրներուն վրայ տեսնուած բաներն ի՞նչ են:

Ճանճեր:

Այս. ճանճի կը նմանին, բայց ճանճէ աւելի խոշոր են, թերևս մեղու են:

Այնչափ մեղուններն այսչոր սակրներուն վրայ ի՞նչ կ'ընեն:

Ես ալ ճիշդ այդ բանը կ'ուզէի հարցնել քեզ: Աստուածաշունչին մէջ տեղ մը մեղուններու և վայրենի գաղանի մը դիտակին վրայով պատմութիւն մը կայ, և այս պատմակերն այն պատմութիւնը կը ներկայացնէ:

Ո՞վ կրնայ ըսել թէ ի՞նչ է այն պատմութիւնը:

ԳՐԱԳԻ ՄԸ ՏՈՒՆԸ

Մօտերս գրադիր մը գեղեցիկ տուն մը շինել տուաւ: Յիշեալ գրագիրը ճանչողները սկսան զարմանալ թէ, նա ինչպէս կրցաւ այնպիսի գեղեցիկ տուն մը շինել տալ, մինչդեռ ինք գոյզն ամասական մը միայն կ'աւանդէ: Հարցուեցաւ թէ այնպիսի գեղեցիկ տուն մը շինելու համար նա ստակն

ՉՈՐ ՈՍԿՐՆԵՐ

Վերի պատկերին մէջ տեսնուած բաներն ի՞նչ են:

Չոր սակրներ են, որ մաջառի մը մէջ կը կենան:

Ի՞նչ տեսակ անասնոյ սակրներ են:

Այն անասունն խոշոր և սրածայր սկուաներ ունի, ուստի և վայրենի գաղան մը ըլլալու է: Հապա ոտքերը: Ոտքերն ինչպէս են: Ոտքերն ալ կատուի ճիրաններու պէս ճիրաններ ունին:

Տղայոց Աւետարեի համար

ՍԱՄՈՒԷԼԻՆ ՈՒՐԱՅՈՒՄԸ

Սամուէլ և Յովսէփ ընկոյզ կը խաղային: Բայց երբ Սամուէլ տեսաւ թէ չկրնար խաղը շահիլ, խարդախութիւն ընել սկսեց, և ընկոյզը մօտեցոյց: Երբ Յովսէփ աս տեսաւ, ըսաւ. «Արդարութեամբ (հէլալ) խաղցիր, եղբայր. ինչո՞ւ կը մօտիկցնես:» «Չէ, բան չըրի», ըսաւ Սամուէլ ըրածն ուրանալով: Յովսէփ, «Աչքովս

ուսկից առաւ. Գրագիրն այս հարցման հետեւեալ կերպով պատասխանեց. «Այս տունը ծխախոտի տուն է» Ամէն մարդ այս պատասխանին վրայ դարմա-ցաւ, և սկսաւ ըսել. «Ծխախոտի տուն, ծխախոտի տուն ի՞նչ ըսել է» Գրա-գիրը իր խօսքը բացատրեց, և ըսաւ. «Ես քան տարի առաջ ծխելու սովորութիւնը թողուցի, և ծխախոտի տրուելու ստակը պահելով շահուտուի: Ահա այն ստակը մինչև հիմա 600 ոսկի եղաւ, և ես այն դումարով այս տունը շինել տուի: Եւ որովհետև այս 600 ոսկին ծխախոտ չիմելով աւելցուցի, այս պատճառաւ ես այս տունը ծխախոտի տուն կոչեցի:»

ևս կայ, որ կ'երևի թէ այս ձայնէն բան մը չհասկնար: Այս աշակերտն է փոքրիկ և սպիտակ ֆինիս մը որ Մարիամը կը դիտէ: Այս պատկերը հինգ կամ վեց տարեկան աղջկանց համար է, և կը յուսամ թէ անոնք այս պատկերին պիտի հաւնին:

Տղայոց Աւետարեթի համար

Ա. Ի. Ա. Ղ. ՈՐ ԶԲՐԻ

Անցեալ օր շուկայէն անցած ատենս տեսայ որ շան լակոտ մը մօրը քովէն քարայտակին վրայ ինկած կը կաղկանձէ: Կուզէի բռնել մօրը քով գնել, բայց կը պժգայի զայն բռնելու, և կը խորհէի թէ գուցէ մայրը բարկանալով վար ձգած է լա-



ԵՐԳԻ ԳԱՍ

Մարիամ և Եսթեր գեղեցիկ ժամանակ կ'անցունեն: Մարիամ դաստուռի և Եսթեր աշակերտի դեր կը կատարեն, և Մարիամ Եսթերին երգելու դաս կուտայ: Ուրիշ երկու աշակերտներ ալ կան, որ ձայն չեն հաներ: Այս աշակերտք են Մարիամին և Եսթերին երկու պէպէքները: Կարծեմ թէ Մարիամ մտաբաւ իր պէպէքը նստարանին վրայ դնել, ուր ան կրնար նստիլ: Կը տեսնէք որ Մարիամին պէպէքն անոր ծնոցայ վրայ է, և երգի դիրքը գրեթէ ծածկած է զայն: Եսթերի պէպէքը նըստարանին ծայրը շիտակ նստած է: Բաց ի Մարիամէն, որ դասատու է, և բաց ի Եսթերէն և պէպէքներէն, որ աշակերտ են, ուրիշ աշակերտ մի

կտար, և եթէ ես քովը հանեմ, ձեռքս կը խածնէ: Մինչև ես այսպէս կը վաւանդէի, տեսայ որ աղքատիկ աղեկ մը թղթի կտորով մը բռնեց լակոտը և դրաւ մօրը քով:

Շատ անգամ միտքերնիս կը գնենք որ աւելի մտաւեռք բարիք բնելու, բայց ինչնեկ պատեհութիւններն ալ վայելելու կը դանդաղինք: Նեղութիւն չկրելու համար բարեբարելէ կը փոխչինք, և փոխչելու համար անտեղի ու ծուռ բաներ կը խորհինք: Եթէ անգամ մը ձեռքերս լուսլանն առնուի, Աստուածս կը հաճեցունէի, և ես կ'ուրախանայի:

Տղայոց Աւետարեթի համար

ՀՐԱԻՐ ԵՒ ՅՈՐԴՈՐ ՏՂԱՅՈՅ

Սիրելի աղայք. Գիտէք թէ ձեր մատաղ հասակն օրհնութեան և անէծքի հասակ միան-

դամայն կրնայ համարուիլ. քանզի այս հասակին մէջ այն տղայք որ զիրենք Տէրոջը կը նուիրեն միշտ օրհնութիւն կը վայելեն, բայց այն տղայք որ զիրենք աշխարհի կուտան անէծք կը ստանան: Աշխարհային բաներն, փառասիրութիւն, անձնասիրութիւն, ծուլութիւն, չար հրեշտակին, սյոսինքն ստատանային ախորժած բաներն են: Իսկ երկնային բաներն են սէր, աստուածապաշտութիւն, հնազանդութիւն որ կ'ուրախացունեն Տէրը: Մանկութեան հասակը շատ փորձութիւններու ենթակայ է, ուստի և աւելի զգուշութեան պէտք ունի: Կան բարի և չար ընկերներ, որ տղայ մը բարի կամ չար կ'ընեն, մանաւանդ թէ չար ընկերութիւնը բարի վարքը կ'ապականէ: Եթէ ձեր այդ անմեղ հասակին մէջ յուսահատութիւն և վիշտեր պատեն զձեզ Տէրոջը դիմեցէք, որ ըսած է. «Եկէք ինձի, բոլոր յոգնած ու բեռնաւորութեան, և ես ձեզ պիտի հանդիպեմ» (Մատթ. ԺԱ, 28): Քրիստոս երբ աշխարհի վրայ էր փոքր տղայքն իւր գիրկն առաւ եւ զանոնք օրհնեց, և հիմա ալ ընդհանուր կերպով կը հրաւիրէ ամէն հասակի մարդիկ անոր երթալու: Դուք, որ Աւետարեթ կը կարդաք, յօժար էք «Տէրոջը հրաւերին պատրաստ ենք» ըսելու: Չեղի պէս և ձեռնէ աւելի փոքր աղայք ալ յաւիտենականութեան կը կանչուին: Երբ գերեզմանատունն կ'երթաք, հոն պիտի տեսնէք շատ փոքր գերեզմաններ ալ: Ուստի, սիրելիք, քանի որ մանկութեան հասակին մէջն էք, կրնաք ապագային համար մեծ պատրաստութիւններ ընել: Այս հասակին մէջ կրնաք զձեզ պատրաստել աշխարհի և երկինքի համար, եթէ ձեզ առաջնորդ բռնէք Յիսուսն որ է միակ կատարեալ վարդապետ թէ մեծերուն և թէ փոքրերուն:

ՀԱՅԿԵԱՆ

ԱՆՅԵԱՆԱՄԱՐՈՅ ՀԱՐՅՄԱՆ ՊԱՏԱՍԻԱՆ

Աբրահամ: Աստուծոյ երեք հրեշտակները: Անոր զուակ մը ծնելու խոստումը: Սողոմբաղաբին շինայեց Աստուած, վանդիկ հոն չգտաւ գոնէ տանն արդար մարդ: Ծնեց. ԺԼ:

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն Խմբագիր ձ. Բ. Կրին

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵՆԻՆ՝ Զագմագնըլար, Յակոբեան խան, Թիւ. 12